

ՀԱՅԿ. ՍՍՀ ՊԵՏԱԿԱՆ ՌԱԴԻՈԿՈՄԻՏԵԻ ԱՇԽԱՏԱԿՑԻ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԵՏ

Ամենայն Հայոց Հայրապետի՝ դեպի Հարավային Ամերիկայի հայաշատ գաղթօջախները և Ֆրանսիա կատարած ուղևորությունից հետո, որը տևեց ավելի քան մեկուկես ամիս, Հայկ. ՍՍՀ պետական ռադիոկոմիտեի աշխատակից Հայկ Կարապետյանը վերջերս Մայր Աթոռ Ս. Էջմիածնում հանդիպեց Նորին Սրբությանը և հարցազրույց ունեցավ Նրա հետ:

Մեր ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում այդ հարցազրույցը:

ՀԱՐՑ.— Վեհափառ Տեր, շուրջ երկամսյա շրջագայությունից հետո Դուք կրկին մայր հայրենիքում եք, ամենայն հայոց հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: Բարի գալուստ եմ մաղթում Ձեզ:

Վեհափառ Տեր, մեր ունկնդիրներին չէի՞ք պատմի արդյոք Հարավային Ամերիկա կատարած Ձեր հովվապետական ուղևորության մասին:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏ.— Աստուծո օգնականությամբ Մենք վերստին այցելություն տվեցինք Հարավային Ամերիկայի մեր մեծ եկեղեցական համայնքներին՝ Արգենտինա, Ուրուգվայ և Բրազիլիա: Այցելեցինք հատկապես Արգենտինայի մայրաքաղաք Բուենոս Այրես, որտեղ ապրում են ավելի քան 70 հազար հայեր, ապա՝ Կորդոբա՝ երկրորդ հայ մեծ համայնքը Արգենտինայում, ինչպես նաև Ուրուգվայի մայրաքաղաք Մոնտեվիդեո, ուր ապրում են շուրջ 15 հազար հայեր: Այցելեցինք նաև Բրազիլիա, որտեղ կան մոտ 20 հազար հայեր՝ մեծավ մասամբ Սան Պաուլոյում, և փոքրաթիվ մի գաղութ էլ՝ Ռիո դե Ժանեյրոյում: Մեր այս այցելությունը Հարավային Ամերիկա երրորդն է: Առաջին անգամ եղել ենք այնտեղ 1960 թվականին, երկրորդ անգամ՝ 1968-ին:

Մենք շնորհակալ ենք Ձեզ, որ ողջունում և բարի գալուստ եք մաղթում Մեզ, և սիրով պիտի ուզեինք ընդառաջել Ձեր խնդրանքին և մի քիչ պատմել այդ մասին:

ՀԱՐՑ.— Վեհափառ Հայրապետ, պատմեցեք խնդրեմ, ի՞նչ վիճակում են Հարավային Ամերիկայի հայկական գաղութները, Ձեր այցելած գաղութներում ճակատագրի բերումով բնակություն հաստատած հայությունը ի՞նչ է անում իր ազգային դիմագիծը պահպանելու համար:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏ.— Ինչպես նախորդ Մեր այցելություններին, այս անգամ ևս, և ավելի լայն չափով գուցե, Մենք հանդիպեցինք մեր ժողովրդի գրեթե բոլոր վավակներին թե՛ եկեղեցական արարողությանց հանդիսավոր առիթներով և թե՛ այցելելով հայկական վարժարաններ և տարբեր հայրենասիրական ու մշակութային միությունների ակումբներ: Ամեն տեղ հաստատեցինք հայկական եռուն և կենդանի կյանք: Բոլորը ոգեշնչված են մեր Մայր Աթոռի՝ Սուրբ Էջմիածնի ծաղկումով և բարերար գործունեությամբ, բոլորը ոգեշնչված են մայր հայրենիքի՝ մեր վերածնված Սովետական Հայաստանի վերելքով և նորանոր նվաճումներով հայրենական կյանքի բոլոր բնագավառներում:

Ես պետք է ասեմ, որ սքանչելի տպավորություններով վերադարձա՝ ականատես լինելով այդ շրջանում ապրող հայ ժողովրդի կազմակերպված, նպատակասլաց հայկական կյանքին: Հատկապես գնահատելի է կրթական գործունեությունը, որ լայն չափերով իրականացվում է: Բուենոս Այրեսում կան հինգ-վեց նախակրթարաններ, մանկապարտեզներ և չորս միջնակարգ վարժարաններ: Բուենոս Այրեսի դպրոցներում հայ աշակերտության ընդհանուր թիվը ավելի քան 2500 է, ինչ որ, անշուշտ, կարևոր թիվ է ներկայացնում գաղթաշխարհի կյանքում: Դպրոցները լավ շենքեր ունեն, նորերն են կառուցվել կամ հները վերափոխվել՝ բոլոր հարմարություններով: Հայկական դպրոցներում մինչև կեսօր գործադրվում է պետական ծրագիրը տեղական՝ իսպաներեն լեզվով, իսկ կեսօրից հետո պարապմունքները շարունակվում են հայկական ծրագրով, ամեն օր 2—3 ժամ: Երեխաներն այդ ժամերին սովորում են հայոց լեզու, հայ գրականություն, հայոց պատմություն, կրոնագիտություն, հայկական երգ-պար: Խանդավառ մթնոլորտ կա, և մեր այնտեղի եկեղեցական-ազգային իշխանությունները և միությունները հերոսական ճիգեր են ի գործ դնում, որպեսզի այդ վարժարանները իրենց նպատակին ծառայեն, և հայ նոր սերունդները կարողանան իսպաներենի կողքին ազատ, համարձակ ու նաև գեղեցիկ խոսել մեր մայրենի լեզուն՝ հայոց լեզուն:

Ես լավ տպավորություններ եմ կրել նաև մշակութային կազմակերպությունների գործունեությունից: Նրանք ևս ունեն նոր, հարմարավետ շենքեր, Բուենոս Այրեսում հատկապես՝ «Արմենիա» մշակութային հաստատությունը, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը և Թեքեյան մշակութային կազմակերպությունը, որոնք բոլորն էլ իրենց ակումբները, հավաքատեղիները ունեն, և որտեղ բավական լայն գործունեություն է ծավալվում:

Բուենոս Այրեսում լույս են տեսնում նաև չորս հայկական թերթեր. մեկը՝ օրաթերթ, երեքը՝ շաբաթաթերթ, որոնք ունեն նաև իսպաներեն բաժին՝ մեկ-երկու էջով: Նույն պատկերը, ավելի ամփոփ կերպով անշուշտ, մենք տեսանք նաև Մոնտեվիդեոյում (Ուրուգվայ) և Բրազիլիայում, որտեղ նույնպես կան հայկական եկեղեցիներ, վարժարաններ և մշակութային միություններ:

Մեր ժողովուրդը ապրում է Սուրբ Էջմիածնի օրինությամբ՝ մասնավորապես, և առավելապես՝ մայր հայրենիքի շնչով և նվաճումներով:

ՀԱՐՑ.— Վեհափառ Տեր, հետաքրքիր է իմանալ, Ձեր այցելած երկրներում հայերն աչքի ընկնո՞ւմ են արդյոք որպես տվյալ երկրների արժանավոր քաղաքացիներ, և ընդհանրապես ինչպե՞ս են վերաբերվում նրանց հանդեպ այդ երկրների ժողովուրդները և իշխանությունները:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏ.— Իրողությունը, որ ես հոգեկան մխիթարությամբ հաստատեցի, այն է, որ մեր ժողովուրդը այնտեղ՝ թե՛ Արգենտինայում, թե՛ Ուրուգվայում և թե՛ Բրազիլիայում վայելում է հարգանքը և անկեղծ բարեկամությունը տեղի ժողովուրդների և տեղի քաղաքային ու պետական իշխանությանց: Մեր հայրենակիցները կարողանում են և՛ իրենց ազգային դիմագիծը պահպանել, և՛ միաժամանակ մնալ տվյալ երկրների օրինապահ և կարգապահ քաղաքացիները:

Մենք այդ երեք երկրներում բազմաթիվ այցելություններ տվեցինք պետական բարձր իշխանությանց: Մեզ սիրով, հարգալիր և ուշադիր վերաբերմունքով ընդունեցին երեք երկրների հանրապետությանց նախագահները, մինիստրներ, նահանգապետներ, քաղաքագլուխներ: Այդ մասին արձագանքեցին նաև տեղի մամուլը, հեռուստատեսությունը, ռադիոն՝ բազում դրվատալից արտահայտություններ ունենալով դեպի մեր մայր Եկեղեցին և դեպի մեր ժողովրդի հին ու նոր ազգային մշակույթը:

Բացառիկ ոգևորության մի օր ապրեցինք Բուենոս Այրեսում, երբ այն փողոցը, որի վրա գտնվում է հայոց եկեղեցին, քաղաքապետության հատուկ որոշումով վերանվանվեց «Արմենիա»: Մեծ հավաքույթ տեղի ունեցավ հենց փողոցում, որ քաղաքի կենտրոնական փողոցներից մեկն է: Քաղաքապետը և ես միասին հուշատախտակի բացումը կատարեցինք, հետո տեղի ունեցավ հանդիսավոր միտինգ, ուր խոսք առավ նաև քաղաքապետը, հետո՝ ուրիշ անձնավորություններ և վերջում էլ, անշուշտ, ես իմ օրհնության խոսքով հանդես եկա՝ իմ ուրախությունը և երախտագիտությունը հայտնելու Բուենոս Այրեսի քաղաքապետական իշխանությանց այդ շատ հայանպաստ, հայասեր վերաբերմունքի համար: Բոլոր հայերը, բնականաբար, ցնծության մեջ էին:

Ահա այսպիսի սքանչելի տպավորություններ ունեցանք նաև այլ առիթներով, երբ պետական իշխանությանց ներկայացուցիչներն ընդունեցին Մեզ: Բնականաբար, ամեն տեղ Մենք այցելություններ տվեցինք նաև մեր սովետական դեսպանությունները:

ՀԱՐՑ.— Այժմ Վեհափառ, մի քանի խոսք Ֆրանսիա կատարած Ձեր ուղևորության մասին:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏ.— Մեկնումի առիթով Մենք յոթ-ութ ժամ մնացինք Փարիզում՝ մինչև հաջորդ օդանավը դեպի Բուենոս Այրես: Այդ մի քանի ժամերը առիթ հանդիսացան, որ Ալֆորվիլ քաղաքի քաղաքագլուխ, մինիստր Ժոզեֆ Ֆրանչեսկին հրավիրի Մեզ, որ ներկա լինենք Ալֆորվիլ քաղաքում նոր կառուցված հայ նահատակաց հուշարձանի բացման հանդեսին: Հրավերը Մենք սիրով ընդունեցինք, բնականաբար: Բազմահազար ժողովուրդ կար հավաքված, երբ տեղի ունեցավ բացումը 1915-ի ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշարձանի: Փառավոր և երկարաշունչ ճառով հանդես եկավ ինքը՝ քաղաքագլուխը, ապա Մենք ելույթ ունեցանք ֆրանսերեն լեզվով: Շատ խանդավառ մթնոլորտ էր, և հպարտ էին մեր հայերը:

Մի քանի ժամ հետո Մեր ճանապարհը շարունակեցինք դեպի Հարավային Ամերիկա, իսկ վերադարձին էլի ժամանեցինք Փարիզ և այնտեղ ևս որոշ գործունեություն ծավալեցինք. մասնակցեցինք եկեղեցական արարողությունների, նաև տարբեր բնույթ կրող հանդիսությունների՝ մշակութային և բարե-

գործական միության հովանու ներքո: Փարիզում Մենք ունեցանք բազմաթիվ հանդիպումներ տարբեր միությունների ներկայացուցիչների հետ: Առանձնապես կբաղվեցինք ֆրանսահայ ապագա եկեղեցական կյանքի կազմակերպչական հարցերով և, կարծում եմ, որ բարեհաջող կերպով մշակվեցին ֆրանսահայ եկեղեցական կյանքի կազմակերպման վերաբերյալ միջոցառումներ, որոնք պիտի ի գործ դրվեն առաջիկա մեկ տարվա ընթացքում՝ անշուշտ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի օրհնության ներքո:

Վերադառնալով Մայր Աթոռ՝ Մենք մնում ենք աղոթող նախ՝ աշխարհի խաղաղության համար, երկրորդ՝ այդ երկրների խաղաղ և առաջադեմ կյանքի համար և մասնավորապես աղոթող ենք մնում մեր այդ գաղթօջախների անսասանության և գոյատևման համար, միշտ նույն եկեղեցաշեն և հայրենանվեր ոգով:

ԱՇԽԱՏԱԿԻՑ.— Շնորհակալություն, Վեհափառ Տեր, Ձեզ ցանկանում ենք քաջառողջություն, երկար տարիների կյանք՝ ի փառս Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի, ի շահ հայրենիք-սփյուռք կապերի էլ ավելի ամրապնդման: